



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
 E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՆԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԵՂԱԲ  
 ՕՐԷՆՃ ՔԱՌՆԹԻԻ ԳԱՂՈՒԹԻՆ ՀԵՏ**

Հայաստանայց Առաքելական Եկեղեցին Կիրակի 29 Յունիս 2008-ին նշեց Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն Այլակերպութեան տօնը, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնն է, ժողովուրդին ծանօթ՝ Վարդավառի տօն անունով:



Նոյն օրը նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 13-րդ տարեդարձն ըլլալով, յընթացս Ս. Պատարագին, Արեւմտեան Թեմի եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք:

Այս գոյգ առիթներով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, եպիսկոպոսական հանդիսաւոր

սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց Օրէնճ Քառնթիի Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, աւուր պատշաճի քարոզեց ու հանդիսապետեց «Հայրապետական Մաղթանք»ի յատուկ արարողութեան:

Սուրբ Սեղանին սպասարկեցին Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Քհնյ. Երեցեան: Աղօթակից եր նաեւ Արժ. Տ. Վարանդ Քհնյ. Ամիրալեան, Յունաստանէն:

Ս. Պատարագի աւարտին, «Կիլիկիա» եւ «Ի վեհ բարձանց» մաղթերգներէն ետք, հաւատացեալներ հերթով մօտեցան եւ աջահամբոյրով շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազան Հայրը՝ վերընտրութեան առիթով, մաղթելով անոր արեւշատ օրեր, ծրագիրներու յաջողութիւն եւ բարի առաքելութիւն:

Ս. Պատարագէն ետք, եկեղեցւոյ կից գտնուող «Ղուկասեան Սրահ»էն ներս տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, մասնակցութեամբ գաղութի գաւակներուն: Սիրոյ ճաշը կը հովանաւորէին Տէր եւ Տիկին Սարգիս եւ Մանուշակ Եկէնեան:

Ինչպես ծանօթ է, Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը այս տարին հռչակած է «Քրիստոնեական Դաստիարակութեան Տարի»: Այս ծիրէն ներս՝ բազմաթիւ միջոցառումներ նախատեսուած են մեր Թեմէն ներս ամբողջ տարուան ընթացքին, ինչպիսիք՝ դասախօսական շարքեր, պատկերասփիւռի յայտագիրներ, գեղարուեստական ձեռնարկներ եւ գիրքերու հրատարակութիւն:



Առ այդ, նոյն օրը, յետ միջօրէին, Սրբոց Քառասնից Սանկանց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ Հոգաբարձութեան կազմակերպութեամբ, եւ հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, տեղի ունեցաւ Քրիստոնեական Դաստիարակութեան Տարուան նուիրում առաջին դասախօսութիւնը, «Քրիստոնեական

Դաստիարակութիւնը եւ Հայ Երիտասարդը» սիւթով: Օրուան դասախօսն էր Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը, շրջապատուած հոգեւորականաց դասուն եւ պատուարժան ազգայիններու, կատարեց Օրէնճ Քաունթի Հայ Կեդրոնի վերանուանման յատուկ արարողութիւնը:

## PRELATE CELEBRATES THE FEAST OF TRANSFIGURATION AT FORTY MARTYRS CHURCH IN ORANGE COUNTY

On Sunday, June 29, 2008, the Armenian community of Orange County came together to celebrate the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ, to offer Pontifical thanksgiving prayers for H.H. Aram I, congratulate the Prelate on his re-election, listen to a lecture dedicated to the Year of Christian Education, and to participate in the renaming of the Armenian Center.



The momentous day began with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrating Divine Liturgy on the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ, during which he presided over Pontifical thanksgiving prayers on the 13<sup>th</sup> anniversary of the enthronement of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia. The Prelate was assisted at the altar by Christian Education Co-

Director Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Hrant

Yeretzian. Rev. Fr. Varant Amiralian, who is visiting from Greece, also participated in the service.

At the conclusion of the service, parishioners had the opportunity to congratulate the Prelate on his re-election and to wish him health and success in his mission. A reception followed at the adjacent "Gugasian" Hall, which was hosted by Mr. and Mrs. Sarkis and Manoushag Yegenian.

In the afternoon, the first lecture in the Year of Christian Education series took place. The lecture was organized by the parish Pastor and Board of Trustees, and featured Very Rev. Fr. Barthev Gulumian speaking on the topic "Christian Education and the Armenian Youth".

Later on in the day, the Prelate presided over the renaming ceremony of the Armenian Center.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, 1 Յուլիսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Զամազգայիի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներուն, որոնք Ազգ. Առաջնորդարան եկած էին Առաջնորդ Սրբազանը շնորհաւորելու չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ վերընտրութեան առիթով: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր Շրջանային Վարչութեան ատենապետ Դոկտ. Վիգէն Եագուպեան: Ներկայ էին Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետն ու գանձապահը՝ Տոքթ. Կարօ Յակոբեան եւ Տիար Սիեր Տեր Յովհաննէսեան:

Հանդիպումը առիթ եղաւ փոխադարձաբար ծանօթանալու Առաջնորդարանի ու Զամազգայիի ծրագիրներուն, մանաւանդ, որ յատուկ լծակցութիւն գոյութիւն ունի Հայ Մշակոյթի ծանօթացման ու զարգացման առաքելութեանց մէջ:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց հիւր պատուիրակութեան եւ ընդհանուր գիծերու մէջ արտայայտուեցաւ մօտաւորապէս ամիս մը առաջ, Անթիլիասի Մայրավանքին մէջ

տեղի ունեցած Միւռնօրհներէին, ապա նաեւ՝ Զրիստոնէական Դաստիարակութեան տարուան առիթով Առաջնորդարանի ծրագրած ձեռնարկներուն մասին: Ան նշեց, որ այս տարի պիտի նշուի մեր Թեմի հիմնադրութեան 35րդ տարեդարձը, որ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ



Կաթողիկոսութեան կողմէ ամերիկեան այս ափերու հոգեւոր ծառայութեան 50րդ տարեդարձն է, առիթներ՝ որոնք կրնան Առաջնորդարանիս ու Յամազգայիսի միջեւ գործակցութեան դաշտեր ստեղծել:

Յամազգայիսի ներկայացուցիչները, իրենց կարգին, խօսեցան մշակութային այս մեծ միութեան հիմնադրութեան 80ամեակին առիթով մեր շրջանին ու ընդհանրապէս հայկական օճախներու մէջ տեղի ունեցող ձեռնարկներուն ու հանդիսութիւններուն մասին:

Հանդիպումի աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

## **PRELATE MEETS WITH REPRESENTATIVES FROM HAMAZKAYIN REGIONAL EXECUTIVE**

On the evening of Tuesday, July 1<sup>st</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Regional Executive of Hamazkayin, who had come to congratulate the Prelate on his re-election. The delegation was headed by Chairman Dr. Viken Yacoubian. Very Rev. Fr. Muron Aznikian, Executive Council Chairman Dr. Garo Agopian, and treasurer Mr. Meher Der Ohanessian participated in the meeting as well.

The visit also offered the opportunity for the exchange of information regarding the undertakings of both the Prelacy and Hamazkayin. The Prelate conveyed information to the members about the recent blessing of Holy Muron that took place in Antelias and about the activities planned in observance of the Year of Christian Education. The Prelate also noted that this year the 35<sup>th</sup> anniversary of the Prelacy and the 50<sup>th</sup> anniversary of the establishment of the Prelacy in North America by the Catholicosate of Cilicia will be celebrated, both of which offer opportunities for collaboration with Hamazkayin.

The Hamazkayin representatives conveyed to the Prelate details about upcoming events to celebrate the 80<sup>th</sup> anniversary of the organization.

The meeting concluded with an exchange of mementos.

## **ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆՑ ՏԱՐԵՇՐՁԱՆԸ ԵՉՐԱՓՎԿՈՒԵՅԱՒ ՀԱՄԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ՀՈՇ ԲԱԶՄՈՒԹԵԱՄԲ**

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի բոլոր եկեղեցիներէն ներս, անցնող տարեշրջանին եւս տեղի ունեցան Ս. Գրոց սերտողութիւններ եւ դաստիարակիչ բնոյթով հաւաքներ, հովանաւորութեամբ Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ առաջնորդութեամբ Թեմիս հոգեւոր հայրերուն, Հայց. Առաք. Եկեղեցւոյ Եկեղեցասէր Եղբայրակցութեան եւ Լուիրեալ սպասարկուներուն:

Երեքշաբթի, 1 Յուլիս 2008-ի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, կատարուեցաւ Երեքշաբթի երեկոյեան հոգեւոր խորհրդածութիւններու տարեշրջանին եզրափակումը: Նախաձեռնութեամբ

Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ կազմակերպութեամբ Թեմիա Քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքին, անցնող տարեշրջանին հոգեւոր խորհրդածութիւններ եւ Աստուածաշունչի սերտողութիւններ տեղի ունեցան վերոյիշեալ Եկեղեցւոյ մէջ, ամէն Երեքշաբթի երեկոներուն:



Ամբողջ տարեշրջանին, ավելի քան 500 անձեր - յատկապէս երիտասարդներ - մասնակցեցան սերտողութեանց, ուսումնասիրելով Աստուածաշունչի վերջին գիրքը՝ Յայտնութիւն Յովհաննուն: Սերտողութիւնները վարեց Քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Տարեշրջանի եզրափակիչ սերտողութեան ավարտին, որուն ներկայ էր Առաջնորդ Սրբազան Հայրը, փառաբանական սաղմոսներ ընթերցուեցան ու գոհաբանական երգեր երգուեցան: Ապա Հայր Սուրբը, յանուն ներկայ հաւատացեալներուն, անգամ մը եւս շնորհաւորեց Առաջնորդ Սրբազան Հօր Առաջնորդական վերընտրութիւնը, անոր մաղթելով առողջութիւն, արեւշատութիւն եւ բարի առաքելութիւն: Ապա հրաւիրեց Սրբազան Հայրը իր պատգամն ու օրհնութիւնը փոխանցելու ներկաներուն:

Առաջնորդ Սրբազանը նախ բարձր գնահատեց Հայր Պարթեւը իր տարած աշխատանքին համար, ինչպէս նաեւ՝ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, Հոգաբարձական կազմը եւ սերտողութեան բոլոր մասնակիցները: Իր խորհրդածութեան մէջ Սրբազանը անդրադարձաւ քրիստոնեայ մարդուն հաւատքի զէնքերով զինուելու եւ աղօթական կեանքի նուիրուելու անհրաժեշտութեան:



Սրբազանը փոխ առնելով հոգեւոր երգի հետեւեալ բառերը՝ «Աւետարանին հրաւեր-պատգամով, եւ հաստատ քայլով, խանդավառ երգով, հաւատքի կայծով ու յոյսի շողով՝ ես կեանք կը պահեմ սիրոյ կրակով», ներկաներուն ըսաւ. «Ամբողջ տարուան ընթացքին դուք ստացաք Աւետարանին հրաւեր պատգամը, որպէսզի հաստատ քայլք հաւատքի ճանապարհէն, խանդավառ երգելով: Արդ, ձեզի կը մնայ արծարծ

պահել ձեզի աւանդուած հաւատքի կայծը եւ յոյսի շողը, ապրելով կեանք մը՝ Յիսուսի բերած սիրոյ կրակով»: Ապա Սրբազան Հայրը կոչ ուղղեց երիտասարդներուն ավելի խորացնելու իրենց հոգեւոր գիտութիւնը սուրբ

գրային այս պահերուն ընթացքին, որպեսզի օր մը, հաւատքով զինուած ու պատրաստուած, քահանայական կարգ ստանալով որպէս մշակ ծառայէն Աստուծոյ բանաւոր հօտին:

Սերտողութեան աւարտին, բոլոր ներկաները ծնրադիր աղօթեցին ու երգեցին «Տէ՛ր, ողորմեա՛»ն, ու ապա Տէրունական Աղօթքի երգեցողութեամբ եւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով արձակուեցան խաղաղութեամբ՝ Աստուծոյ Հոգիով զօրացած ու քաղցրացած:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկաներուն բաժնեց Աստուածամօր նուիրուած աղօթք-օրացոյցներ, որմէ ետք «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահէն ներս, Հոգաբարձութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

## CONCLUSION OF BIBLE STUDY AT PRELACY CHURCHES

Throughout the past year, Bible studies took place on a regular basis at our Prelacy Churches under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and led by our Reverend Fathers as well as members of the Armenian Ecclesiastical Brotherhood. During this past week, Bible studies conducted by the Directors of the Prelacy Christian Education Department concluded for the summer break.



At St. Mary's Church in Glendale, Bible study was offered every Tuesday night by Very Rev. Fr. Barthev Gulumian, which hundreds of faithful, and in particular youth, attended. The Prelate was present at the last session which took place on the evening of Tuesday, July 1<sup>st</sup>, and during which the Book of Revelation was studied. The session concluded with the recitation of psalms and singing of hymns, after

which Very Rev. Fr. Barthev Gulumian congratulated the Prelate on his re-election and conveyed his well wishes on behalf of the faithful present. He then invited the Prelate to deliver his message and blessings.

The Prelate began by commending Very Rev. Fr. Gulumian for his hard work and preparation, as well as the parish Pastors, Board of Trustees, and the participants. In his message the Prelate emphasized the importance of being fortified by our Christian faith and committed to a life of prayer and urged the faithful to remain true to the faith that was bequeathed to us and to live our lives in Jesus' love. The Prelate also called on the youth to further develop their knowledge of our faith and spiritual values during Bible study sessions so that they will be prepared to one day serve and lead our community as clergy members.

Following the benediction the Prelate presented the faithful with a prayer devoted to the Holy Mother or God, after which a reception took place at “Armenag Der Bedrossian” Hall organized by the Board of Trustees.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Յ.Ս.Ը.Մ.Ի 33ՐԴ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Այս շաբաթավերջին, Պըրմիսկիեմ Հայ Սքուլի համալիրին մէջ, տեղի կ'ունենան Յ.Ս.Ը.Մ.Ի 33րդ Նաւասարդեան մարզախաղերու փակման հանդիսութիւնը, փառատօսն ու տողանցքը:

Այս ծիրէն ներս, Ուրբաթ, 4 Յուլիսի յետմիջօրէին, Առաջնորդ Սրբազանը այցելութիւններ պիտի տայ կրպակները, որոնց շարքին՝ մեր Թեմի եկեղեցիներու Երիտասարդական միութիւններուն կրպակը: Առաջնորդ Սրբազանին պիտի ընկերանայ Արժ. Տ. Վազգէն Քիւնյ. Աթմաճեան:

Կիրակի 6 Յուլիսին, կ.ե. ժամը 4-ին, Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ Նաւասարդեան մարզախաղերու փակման հանդիսութեան ու տողանցքին, եւ այս առիթով պիտի փոխանցէ իր պատգամն ու օրհնութիւնները:

Նշենք, որ անցեալ շաբաթ երեկոյեան, Studio City-ի CBS Studio-ի մէջ տեղի ունեցաւ Յ.Ս.Ը.Մ.Ի Յաղթանակի Պարահանդէսը: Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց իր օրհնութիւնները:

## **PRELATE TO PARTICIPATE IN CLOSING CEREMONIES OF NAVASARTIAN GAMES**

The 33<sup>rd</sup> Navasartian games and festival will take place from Thursday, July 3<sup>rd</sup>, to Sunday, July 6<sup>th</sup>, at Birmingham High School. On Friday, July 4<sup>th</sup>, the Prelate will visit the Armenian Church Youth Association (ACYA) booth and convey his blessings. Rev. Fr. Vazken Atmajian will accompany the Prelate.

On the afternoon of Sunday, July 6<sup>th</sup>, the Prelate will attend the closing ceremonies and convey his message and blessings.

On Saturday, June 28<sup>th</sup>, the Prelate attended the Victory Ball which took place at CBS Studio Center in Studio City, and conveyed his blessings.